Պարույր Սևակ

Թախծի երկարությունը

Քայլում եմ այնպե՛ս,
Ոտներըս կարծես լինեն ուրիշի,
Այնպե՛ս կանգ առնում,
Ուրիշն է կարծես կանգ առնում այստե՛ղ՝
Այս քաղաքային լճակի առաջ,
Ու նայում այնպե՛ս,
Կարծես ուրիշի աչք եմ փորձարկում:
Եվ այս վիճակը տևում է այնքան,
Մինչև որ հանկարծ
Մի ժանիքավոր-գիշատիչ քամի
Վրա է ընկնում
Ու քաղաքային այս խեղճ լճակն է հոշոտում քինով:
Եվ ջուրը կարծես չի՛ լալիս անգամ.
Ջուրը տենդո՞ւմ է...
…Մի ժանիքավոր թախիծ էլ հիմա
Մխվել է իմ մեջ, ինչպես անձավում,
Եվ հոշոտում է իմ էությունը:
Ա՜խ, փախստական իմ էությունը պետք է ե՛տ բերել,
Մի կերպ ե՛տ բերել, թեկուզ խաբելո՞վ,
Թե չէ դատարկված իմ քարանձավում
Ամայությունն է զկրտում անվերջ,

Թե չէ արթնացած իմ չղջիկներն են աչքերիս զարկվում,
Իրենց լպրծուն թևերով կախվում իմ թարթափներից,
Իբրև գորշ կաթիլ հոգու արցունքի՝
Ա՛յն համաչափված կաթոցքի ձևով,
Որ ընդամենը լոկ քա՛ր չի ծակում,
Այլ համբր և խուլ վայրկյաններին էլ պարգևում է ձա՛յն
Եվ դրանով իսկ կետադրրում է անտրրոհ օրը.
-Կե՛տ-գի՛ծ-կե՛տ... գի՛ծ-կե՛տ...
Ու եթե կետն ու գիծը միացնենք,
Դու ի՞նչ ես կարծում,
Մի՞թե սլաքներն իմ ժամացույցի ետ-ետ չեն գնա,
Որպեսզի... կրկի՛ն եղածը լինի
Ու ներկայանա անցյա՛լը դարձյալ:
Մի՞թե այս «միթե»-ն
Չի ծլարձակվում ո՛չ մի բարությամբ:
ՉԷ՛,
Երազախաբ լինելուց երբեք զավակ չի՛ ծնվում...
-Կե՛տ-գի՛ծ-կե՛տ... գի՛ծ-կե՛տ,-
Օտար մի ձեռք է կարծես միացնում կետն ու գիծն իրար
Եվ դրանով իսկ չափում է մի կերպ
Ջսպանակաձն թախծի... մոտավո՛ր երկարությունը...
Ու ես զգում եմ ճառագայթների ճնշումն ինձ վրա
Եվ ծանրությունը՝ բիբերիս խորքում:
Ու ետ դառնալով քայլում եմ այնպե՛ս,
Ոտներրս կարծես լինեն ուրիշի,
Նայում եմ այնպե՛ս,
Կարծես ուրիշի աչք եմ փորձարկում.
Ու եթե թախծում՝
Ուրիշի՛ սրտով...
Նույն ժանիքավոր-գիշատիչ քամին՝

Հոշոտված լճի դիակը լքած,
Իր մագիլներն է խրում գլխիս մեջ,
Նաև թիկունքիս,
Եվ չի՛ հասկանում,
Որ իմ գլուխը իմը չէ բնավ,
Եվ ուրիշինն է թիկունքը նաև...
Մանուկներն այստեղ խաղում են գնդակ,
Մանուկներն այնտեղ գնում են դպրոց,
Մանուկներն անվերջ երթն են խանգարում
Նախրի պես անցնող մեքենաների
Եվ մի մոլորվա՜ծ-շվարա՜ծ քեռու,
Որ քայլ է փոխում ուրիշի՛ ոտքով,
Եթե նայում է՝ ուրիշի՛ աչքով,
Եվ մտածելով գլխո՛վ ուրիշի՝
Առայժմ այն է հասկացել միայն,
Որ երազախաբ լինելուց երբեք զավակ չի՛ ծնվում...

16-17.II.1964թ.
Երևան